



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2012 թ.

N 2-2011/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 24.03.2012թ. նիստի 2-2012 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2012թ. ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Թումանյան 63. հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
2. Բաժնետերերի գրանցման ամսաթիվ և ժամ սահմանել 2012թ. ապրիլի 30-ին ժամը 10:00, իսկ վայր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Թումանյան 63:
3. Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2012թ. մարտի 24-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
4. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.
 - 1) Տարեկան հաշվետվությունների ներկայացում
 - 2) Ընկերության ռազմավարական ծրագրի ներկայացում
 - 3) Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում
 - 4) 2011թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում
 - 5) Ընկերության 2012թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության ընտրություն
 - 6) Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը
 - 7) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2011 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում,
 - 8) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին (խորհրդի քանակական կազմի փոփոխություն)
 - 9) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն
5. Բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլետրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:

6. Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը լրացված քվեաթերթիկները կարող են ուղարկել (ներկայացնել) ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեով՝ մինչև 2012 թվականի ապրիլի 30-ը, ժամը 16:00-ն:
8. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատաքների իրականացումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի մարտի 24-ից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան